ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
2021, № 1, 49-60 *Քաղաքական սոցիոլոգիա*
https://doi.org/10.46991/BYSU:F/2021.12.1.049

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ*

ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ, ԱՐԵՄ ՄԿՐՏՉՅԱՆ, ԳԱԳԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցային միջոցների հասարակական ազդեցության շարունակական աճը տեսաբաններից շատերին (Գիդենս Է., Կաստելս Է., Բեկ Ու.) թույլ է տալիս ընթացիկ աշխարհակարգը բնորոշել դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին առաջ քաշված «տեղեկատվական հասարակություն» հասկացությամբ: Այդուհանդերձ, տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցային միջոցների զարգացումը առաջ է բերում մի շարք մարտահրավերներ, որոնք շոշափում են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են հասարակական անվտանգությունը, ԶԼՄ-ների օգտագործմամբ փաստերի նպատակադրված խեղաթյուրումը, բարոյաէթիկական նորմերի խաթարումը, մասնավոր դաշտի, անհատական տվյալների շահագործման վտանգները և այլն: Մյուս կողմից, հիշյալ հիմնախնդիրների կարգավորումը բացառապես վերևից ուղղորդվող պետական քաղաքականության, գերատեսչական որոշումների միջոցով բավարար արդյունավետություն չի գրանցում: Մասնավորապես, սույն մարտահրավերներին ուղղված ջանքերը կարող են կառուցողական արդյունքներ գրանցել միայն համալիր մոտեցումների շրջանակներում, ինչը, պետական քաղաքականությանը զուգահեռ, ենթադրում է նաև հասարակության քաղաքացիական հատվածի մասնակցային ակտիվություն, քաղաքացիների շրջանում վստահության բարձր մակարդակ, քաղաքացիական գիտելիքների ձևավորում, որոնք, ըստ Հարթի և Ռիչարդսոնի, քաղաքացիական ինքնության հենասյուներն են[1]:

Անդրադառնալով տեղային համատեքստին՝ նշենք, որ սահմանամերձ գյուղական համայնքներն այսօր անվտանգային հարցերում առանցքային դեր են խաղում Հայաստանի Հանրապետության համար: Ուստի կարևոր է նման համայնքների անվտանգային հիմնախնդիրների դիտակյունից ուսումնասիրել տեղեկատվական մարտահրավերների դիմագրավման քաղաքացիական և ինքնութենական մեխանիզմները, դրանց ներուժն ու կազմավորման առանձնահատկությունները:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի՝ 2019-2021 թթ. № 19YR-5H069 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

[1] Տե՛ս **Hart D., Richardson C**. and **Wilkenfeld B**., Civic Identity, Camden, NJ, USA, 2011:

Հետազոտության նպատակը տեղեկատվական մարտահրավերների և քաղաքացիական ինքնության ձևավորման գործընթացի միջև փոխազդման մեխանիզմների ու դրանց գործունեության արդյունքների վերհանումն է: Հետազոտության **օբյեկտը** քաղաքացիական ինքնության ձևավորման համատեքստում տեղեկատվական ոլորտի հայաստանյան մարտահրավերներն են, իսկ հետազոտության **առարկան**՝ տեղեկատվական ոլորտի մարտահրավերների և քաղաքացիական ինքնության ձևավորման գործընթացի միջև դրսևորվող փոխազդման առանձնահատկությունները:

Հետազոտությամբ խնդիր է դրվել պարզել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ գիտական մշակվածության մակարդակը, վեր հանել հայաստանյան տեղեկատվական ոլորտի հիմնական մարտահրավերները և դրանց բովանդակությունը, հայաստանյան հասարակության օրինակով պարզել քաղաքացիական ինքնակազմակերպման դերը տեղեկատվական մարտահրավերների կարգավորման գործում, պարզել քաղաքացիական ուսուցման, ինքնակրթական հարթակների ներգրավածությունը մեդիագրագիտության բարձրացման գործում, պարզել դրանց դերը տեղեկատվական անվտանգության խնդիրների տեսանկյունից, հայաստանյան հասարակության օրինակով պարզել այն հիմնական տեղեկատվական մեխանիզմները, որոնք առավել մեծ դեր ունեն հայաստանյան քաղաքացիական ինքնության ձևավորման գործընթացում, դուրս բերել հիշյալ մեխանիզմների կառուցվածքային և գործառութային յուրահատկությունները, ինչպես նաև այդ մեխանիզմների նկատմամբ հայաստանյան ընկալումները:

Հետազոտության ընթացակարգն ու ընտրված մեթոդների հիմնավորումը:

Սույն հետազոտության շրջանակներում փաստաթղթերի ավանդական վերլուծության մեթոդը համադրվել է խորին հարցազրույցների մեթոդի հետ: Մասնավորապես, փաստաթղթերի ավանդական վերլուծությունը հիմնվել է համացանցային բաց աղբյուրների, թեմային վերաբերող գիտական հրապարակումների, ԶԼՄ մեդիատեքստերի ուսումնասիրության վրա, ընդ որում՝ ԶԼՄ տեքստերի ընտրանքի շրջանակներում ուսումնասիրվել են վերջին տարիներին Հայաստանում ամենաայցելվող լրատվական կայքերը (ըստ SimilarWeb բրիտանական հաշվիչ համակարգի վարկանիշային ցանկի, ինչպես նաև ըստ www.alexa.com աղբյուրի դասակարգման):

Որակական խորին հարցազրույցների մեթոդի շրջանակներում ՀՀ սահմանամերձ համայնքների իրավիճակի ուսումնասիրությունը բխել է այն կանխավարկածից, որ այդտեղ անվտանգային առաջնահերթությունը յուրօրինակ նախապայման է տեղեկատվական հոսքերի և քաղաքացիական ինքնության փոխազդեցության դաշտում: Սահմանամերձ գյուղերի ընտրության շրջանակներում առանձնացվել են Ադրբե-

ջանին սահմանակից բնակավայրերը, ինչը պայմանավորված է անվտանգային ռիսկերի սրությամբ: Մասնավորապես, հետազոտական ընտրանքում ներառվել է ՀՀ արևմտյան և արևելյան գոտու մեկական սահմանամերձ մարզ (համապատասխանաբար՝ Արարատի և Տավուշի մարզերը), որոնց շրջանակներում ընտրվել է 4 գյուղ, որոնցից յուրաքանչյուրում իրականացվել է երկուական խորին հարցազրույց (ընդհանուր՝ 16 հարցազրույց):

Այսպիսով, սույն հետազոտության շրջանակներում իրականացված հարցումների միջոցով ձևավորված պատկերի համաձայն՝ հարցվածների զգալի մասը (հատկապես երիտասարդությունը) օգտագործում է համացանցը որպես տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուր: Մյուս կողմից, երբ հարցվողներն առանձնացվում են ըստ տարիքային խմբերի, պարզ է դառնում, որ տեղեկատվության ստացման առաջնային աղբյուրները երիտասարդների և տարեցների համար տարբեր են: Այսպիսով, գյուղաբնակ երիտասարդների համար տեղեկատվության ստացման հիմնական արտաքին աղբյուրը համացանցային լրատվական միջոցներն են և սոցիալական ցանցերը.

«Դե, ասենք, օգտվում եմ ավելի շատ համացանցից, որպեսզի տեղեկատվությունը որոշ չափով իմանամ: Ասենք, չեմ օգտվում միայն ֆեյսբուքից, որը որ սուտ չի, ինչ-որ չափով հստակ տեղեկատվություն ա տալիս: Ու, ասենք, ունեմ ծանոթներ, որ ավելի շատ իմ ծանոթներից եմ էլի իմանում»:

Առավել բարձր տարիքային խմբի ներկայացուցիչների պատասխաններից երևում էր, որ նրանք ավելի քիչ են օգտնվում համացանցային աղբյուրներից՝ նախապատվությունը տալով հեռուստատեսությանը.

«Հեռուստացույցով նայում եմ: Չէ, չէ, ինտերնետից չեմ օգտվում» :

Համացանցից օգտվելու պատճառ է ներկայացվում մատչելիությունը, ժամանակի խնայողությունը, տեսալսողական հոլովակների առկայությունը, ինչը հաճախ դիտվում է որպես փաստերի հավաստիությունը ստուգելու արդյունավետ միջոց: Մասնավորապես, հարցվածները հաճախ նշում էին.

«… (համացանցը) հեշտ միջոց է ավելի շատ բան իմանալու համար»,

« … հիմնվում ես այն բանի վրա, ինչ տեսնում ես փաստացի, այլ ոչ թե գրվածքով…»:

Հետազոտությամբ ձեռք բերված տվյալները ցույց են տալիս, որ հեռուստատեսությունն աստիճանաբար կորցնում է իր նախկին նշանակությունը որպես պետական քաղաքականություն լուսաբանող կարևորագույն լրատվական միջոց: Դա վերջին տասնամյակներին բնորոշ իրողություն է: Այս հարցում երիտասարդներն իհարկե տարբերվում են ավագ սերնդից: Վերջիններիս համար հեռուստատեսությունը դեռևս պահպանում է տեղեկատվության ստացման առանցքային աղբյուրի իր դիրքերը, իսկ համացանցի նշանակության մեծացումը առաջ է բերում տեղեկատվական նոր մարտահրավերներ: Ըստ այդմ՝

տեսանյութերով «տեսածը և լսածը» տպավորություն թողնելու տեսանկյունից կարևոր դեր ունի: Մյուս կողմից, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների տվյալների համաձայն՝ համացանցի ազատության դասիչով Հայաստանը առաջընթաց է գրանցել[2]: Հետևաբար՝ մի կողմից տեսանելի է դրական ազդեցությունը, քանի որ յուրաքանչյուր քաղաքացի այժմ հնարավորություն ունի ազատ արտահայտվելու, մյուս կողմից ավելացել են ոչ արհեստավարժ նյութերը, և մեծացել է ոչ հավաստի տեղեկատվության շրջանառման հավանականությունը: Այս առումով հարցվողները նշում էին.

«*Ֆեյսբուքով կամ յութուբով տարածում են խեղաթյուրող բաներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, ուղղակի, ասենք, մարդկանց շփոթեցնելու, վախի, լարվածության մեջ պահելու համար տարածում են*»:

Ավանդական լրատվամիջոցներին փոխարինելու են եկել նորերը: Ժամանակակից մեդիան նոր հեռանկարներ է ստեղծել ամենուր: Մեր հարցումները ցույց են տալիս, որ թերթերը և ամսագրերը շատ հազվադեպ կիրառություն ունեն և գրեթե դուրս են եկել ուշադրության դաշտից, այնինչ թերթերը տալիս են մի շարք հնարավորություններ և ունեն որոշակի առավելություններ: Այս ավանդական լրատվամիջոցները խորը վերլուծության և թեման ամբողջությամբ ընդգրկելու հնարավորություն են ընձեռում, ինչը պայմանավորված է կարդալու վայրով և արագությամբ, ինչպես նաև դրանք վերընթերցելու և որպես փաստաթուղթ օգտագործելու հնարավորությամբ: Մյուս կողմից՝ տպագիր լրատվամիջոցներն ավելի արդյունավետ են որպես տեղեկատվական ազդեցության երկրորդ էշելոն[3]: Այս համատեքստում հարցվողները նշում են, որ համացանցում կարելի է գտնել ցանկացած տեղեկատվություն, ինչը նվազեցնում է թերթի պահանջվածությունը: Միաժամանակ ակնհայտ է, որ համացանցային կայքերում (Ֆեյսբուք, Յութուբ և այլն) տեղադրված տեղեկատվությունը վերապահումով է վստահելի, քանի որ շատ են մանիպուլյատիվ բնույթի նյութերը: Ուստի անհրաժեշտ է նշել, որ թերթերը, ամսագրերը ապահովում են տեղեկատվության «մշակման» կարևոր փուլեր՝ տրամադրելով ավելի վստահելի տեղեկատվություն: Իհարկե, տպագիր մամուլը հասարակական տրամադրությունների վրա ներգործելու տարբեր գործիքներ ունեն, սակայն ոչ ճիշտ տեղեկատվությունը ավելի քիչ է տեղ գտնում այնտեղ: Տեղին է մեջբերել գերմանացի լրագրող Վոլֆգանգ Ռիպլի «օրենքը», ըստ որի՝ նոր և առավել զարգացած լրատվության միջոցները երբեք չեն փոխարինի հներին[4]:

---

[2] Տե՛ս https://rsf.org/en/ranking, 2019 world press freedom index, նաև https://freedomhouse .org/report/ freedom-world/freedom-world-2019, Freedom in the World 2019 Democracy in Retreat:

[3] Տե՛ս **Վ. Միրաքյան**, Լրատվամիջոցների ազդեցության հնարավորությունները, Եր., 2010, էջ 41:

[4] Տե՛ս **Riepl W.**, Das Nachrichtenwesen des Altertums mit besonderer Rücksicht auf die Römer. — Hildesheim: Georg Olms, 1972, էջ 478:

Հետևաբար՝ հասարակության համար հավաստի տեղեկատվություն ստանալու փնտրտուքը կարելի է ապահովել ավանդական լրատվամիջոցների՝ մասնավորապես թերթերի խրախուսմամբ: Այսպիսով, տեղեկատվական ոլորտի գլխավոր մարտահրավերներից են հասարակության մեջ քիչ տեղեկացվածության խնդիրը, իրական իրադարձություններից կտրված լինելու հանգամանքը, քանի որ երբեմն հասարակության ստվար մասը օբյեկտիվ թե սուբյեկտիվ պատճառներով չի ունենում բավարար իրազեկվածություն, թե ինչ է կատարվում շուրջբոլորը: Ասվածի վկայությունն են հարցվածների նման պատասխանները.

«… մեր աչքերը բացվել ա, ու ես չեմ կարծել, որ նման անարդար երկրում ենք ապրել: Դե կարևորն էն ա, որ ես Երևանի փողոցներով հեղափոխության ժամանակ որ անցնում էի, պարում էին ժողովուրդը: Դրական ա»:

Համացանցից ստացված տեղեկությունների մի մասն է համարվում վստահելի կամ կիսով չափ վստահելի: Ի պատասխան այն հարցի, թե որքանով եք վստահում Ձեր հիշատակած լրատվական աղբյուրներին, նշվում է.

«Երևի մի 50% , 50-60%, ոչ լրիվ, հաստատ»:

Իսկ վստահելի է համարվում այն աղբյուրը, որը երկար ժամանակ հավաստի տեղեկություններ է հաղորդել և դրանով ապահովել իր հետագա վստահելի լինելու կարգավիճակը.

« … վստահությունը նրանից ա, որ որոշ ժամանակ տեսնում ես, կարդում ես, տենում ես էլի, որ կարաս էդ նյութերին վստահությամբ վերաբերվել: Հա, ժամանակի ընթացքում ձեռք ես բերում»:

Հարցվողների կարծիքով՝ սահմանամերձ համայնքներում տեղեկատվության ստացման աղբյուր են միջանձնային կապերը (միջընկերային, միջհարևանային, բարեկամական) և ոչ ֆորմալ հաղորդակցությունները: Համացանցից և հեռուստատեսությունից տեղեկատվություն ստանալուց զատ՝ շփվելու և տեղեկություններ ձեռք բերելու այս ձևը ևս որոշակի նշանակություն ունի նշված համայնքներում: Միևնույն համայնքում բնակվող մարդիկ հաճախ փոխանակում են տեղեկություններ՝ մասնավորապես բարեկամների, հարևանների հետ, ինչպես նաև գյուղամիջյան քննարկումների ժամանակ: Հարցվողների մի մասը երբեմն մասնակցում է նման քննարկումների և հաճախ տեղեկատվություն է ստանում հենց այս միջոցով: ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքներում կատարված սոցիոլոգիական հետազոտության շրջանակներում պարզվեց, որ հարցվողների համար տեղեկատվություն (հատկապես քաղաքական իրադարձությունների մասին) ստանալու հիմնական աղբյուրներից են ներընտանեկան, ներհամայնքային քննարկումները.

«Գյուղամեջում ենք հավաքվում, զրուցում, ամեն մեկն էլ իր տեսած-լսածն ա ասում, քննարկում ենք էլի տարբեր քաղաքական իրադարձություններ»:

«Տանը միշտ էլ քննարկում ենք քաղաքական անցուդարձը, հեռուստացույց չեմ դիտում, ընկերներից, ծնողներից տեղեկանում եմ»:

Այսպիսի ներհամայնքային լրատվական հոսքերը պարունակում են տեղեկատվության փոփոխման ու խեղաթյուրման ռիսկեր և գործնականում վերահսկելի չեն: Տեղեկատվության արժանահավատության գնահատումը տեղի է ունենում հենց համայնքի ներսում՝ հիմնվելով ներհամայնքային, միջանձնային փոխհարաբերությունների փորձի վրա: Հետևաբար՝ ներհամայնքային քննարկումները՝ որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրներ, լրացուցիչ անվտանգային ռիսկեր են պարունակում սահմանամերձ գյուղերում:

Հատկանշական է նաև սահմանամերձ գյուղական համայնքներում առավել հետաքրքրական ոլորտների բաշխվածությունը: Սոցիոլոգիական հետազոտության տվյալները փաստում են, որ սահմանամերձ գյուղաբնակների մեծ մասին հետաքրքրում է Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակը: Հարցվածները հիմնականում նշում էին, որ հետաքրքրված են հայաստանյան քաղաքական իրադարձություններով.

«Քաղաքականությամբ եմ հետաքրքրված առավել էլի, թե չէ տնտեսականը մենք ստեղծում ենք, մենք սպառում ենք»:

«Արտաքին քաղաքականությամբ շատ չէ, որովհետև ներքինով ցավում եմ, հա հետաքրքրվում եմ: Մի քիչ հապճեպորեն ա ստացվում կառավարության որոշումը, էս երևի կորոնավիրուս հիվանդության պատճառով ա: Դե բիզնեսով ինչի՞ պիտի հետաքրքրվեմ, դե մեր գյուղում բիզնեսով զբաղվող չկա:»

Գյուղական երիտասարդությունը մեծ դեր ունի ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման գործում: Ուստի գյուղում բնակվող երիտասարդների հետ տարվող ինքնության քաղաքականությունը կարիք ունի առանձնահատուկ ուշադրության: Տեղեկատվական հոսքերի վերոնշյալ ազդեցությունը ուղիղ տարածվում է սահմանամերձ համայնքների բնակիչների ինքնության մոդելների, մասնավորապես քաղաքացիական ինքնության ձևավորման վրա, որի գաղափարաբանության վերաբերյալ նկատելի են մեկնաբանման տարբեր հայեցակետեր: Մասնավորապես, մի դեպքում քաղաքացիական ինքնությունը դիտարկվում է համաշխարհայնացման գործընթացների, մեկ այլ դեպքում՝ քաղաքացիության սոցիալ-հոգեբանական դրսևորումների համատեքստում:

Քաղաքացիական ինքնության շուրջ առաջարկվող տեսակետների բազմազանությունն ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ այն բնութագրվում է սոցիալ-մշակութային ընդհանրություններով պայմանավորված քաղաքացիական դերերի, արժեքների, ինստիտուտների և ինքնութենական գործընթացների հարաբերակցությամբ[5]: Քաղաքացիական

[5] Տե՛ս **Дробижева Л. М.** Государственная и этническая идентичность: выбор и подвижность // Гражданская, этническая и религиозная идентичность в современной России.

ինքնությունն ընդհանուր առմամբ ենթադրում է պետության հետ քաղաքացիների նույնականացում՝ հիմնված ընդհանուր համերաշխության նախապայմանի վրա: Հետևապես, առանձին անձանց ինքնանույնականացումը քաղաքացիական տարրերի համատեքստում ներկայացուցչական նշանակություն ունի քաղաքացիական ինքնության ուսումնասիրման տեսանկյունից: Ըստ այդմ հատկանշական են ՀՀ սահմանամերձ գյուղերի բնակիչների քաղաքացիական ինքնաընկալումները:

Այս ուղղությամբ իրականացված սոցիոլոգիական հարցումների միջոցով կատարել ենք մի շարք ուշագրավ եզրահանգումներ: Մասնավորապես, շատ դեպքերում հարցվածների քաղաքացիական ինքնաընկալումները հիմնվում են իրավաքաղաքական կարգավիճակի, տեղային և ժողովրդագրական բնութագրիչների վրա: Այս մասին են վկայում նմանօրինակ պատասխանները.

«*Ծնվել ես, ապրել ես ՀՀ-ում , ՀՀ քաղաքացի ես*»:

«Հայաստանում բնակվող յուրաքանչյուր մարդն էլ Հայաստանի քաղաքացի է»:

«…Դե, էտ ա էլի, ստեղ ես ապրում, ստեղ ես ծնվել, ուրեմն Հայաստանի Հանրապետության քաղաքացի ես…»:

Այդուհանդերձ, ՀՀ սահմանամերձ գյուղերի բնակիչների պատասխանները ցույց են տալիս, որ քաղաքացիական ինքնանույնականացման հիմնական չափանիշը ազատությունն է, ընդ որում՝ ազատության ընկալումներում գլխավորապես կարևորվում է օրենքի գերակայման հանգամանքը՝ որպես իրավական անվտանգության նախապայման, ինչն իր հերթին երաշխիքներ է ստեղծում սեփական երկրում ազատ գործունեություն ծավալելու, ինքնահիրացվելու հնարավորությունների համար: Ինչպես գյուղացիներն են նշում՝

«Ասենք , որ իրա երկրի մեջ ինքը ազատ ա: Իրա երկրի մեջ լինելու ա իրա երկրի անդամը: Ունենա իրա դերը էս երկրում, եթե ինչ-որ բանով կարում ա աջակցի համայնքին, երկրին, սենց ասեմ»:

«Դե, որ ապրում ես ՀՀ ում, ազատ ես, քո երկիրն ա էլի, ու հպարտ պիտի լինես, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացի ես…»:

Հարցումների համաձայն՝ սահմանամերձ գյուղերի բնակիչների շրջանում քաղաքացիական ընկալումները հուզական առումով աչքի են ընկնում դրական երանգավորումներով և բարձր ինքնագնահատականով: Այս դեպքերում քաղաքացիական պատկանելությունը զուգակցվում է հպարտության զգացողությամբ.

«Հայաստանի հպարտ քաղաքացի»:

«Ես հպարտ եմ զգում, երբ հայ եմ, ՀՀ քաղաքացի եմ: Դե, միգուցե տարբերություն չկա, բայց ամեն երկրի քաղաքացի պարտավոր ա էտ երկրի քաղաքացին համարել իրան»:

M., 2006, էջ 10-30:

«ՀՀ քաղաքացի, ես կոնկրետ հպարտ եմ, չգիտեմ, շատ բաներ կան հպարտանալու»:

Քաղաքացիական ինքնության հայեցակարգերի համաձայն՝ վերջինիս բնութագրման կենտրոնական չափանիշներից մեկը մասնակցային ակտիվությունն է: Ըստ այդմ, բարձր ցուցանիշ ունեցող քաղաքացիական ինքնությունը սոցիալական և քաղաքացիական կյանքում քաղաքացիների մասնակցությունը խթանող կարևոր գործոններից է[6]: Մասնավորապես, քաղաքացիական ինքնության գիտակցումը դրդում է քաղաքացիներին կամավորական գործունեության միջոցով ներգրավվելու համայնքային կյանքում, մասնակցելու տեղական և համապետական ընտրություններին, անհրաժեշտության դեպքում պատրաստ լինել ընդգրկվելու պաշտպանական կառուցվածքներում, պատշաճորեն կատարելու հարկային պարտավորությունները[7]: Քաղաքացիական ինքնության հիշյալ բնութագրից ելնելով՝ ՀՀ սահմանամերձ գյուղերի բնակիչների շրջանում իրականացված հարցմամբ ուսումնասիրել ենք նաև վերջիններիս մասնակցային ակտիվության առանձնահատկությունները: Այս համատեքստում հնչած պատասխանները ցույց են տալիս, որ ՀՀ սահմանամերձ գյուղերի բնակիչների շրջանում առկա է քաղաքացիական մասնակցության նվազ մակարդակ: Մասնավորապես, հարցվածները դժվարանում են տեսնել իրենց սուբյեկտային ազդեցությունը որոշումներ կայացնող կառավարման մարմինների վրա: Ընդ որում, եթե համայնքային մակարդակում այս ազդեցության վերաբերյալ նշվում են ներգրավման որոշ օրինակներ (մասնավորապես գյուղատնտեսական գործունեությամբ), ապա մարզային մակարդակում որևէ ազդեցության մասին գրեթե չի խոսվում: Մյուս կողմից հատկանշական է, որ հարցվածների մասնակցային ակտիվության նման համապատկերը զգալիորեն պայմանավորված է իրազեկվածության հիմնախնդրով: Հարցվածների շրջանում ակներև է տեղեկատվական սղությունը քաղաքացիական մասնակցության մեխանիզմների վերաբերյալ: Այս միտվածության մասին է վկայում հատկապես հարցվածների չեզոքությունը (առանձին բացառություններով) մասնակցության արդի մեխանիզմների (սոցիալական ցանցեր, մեդիահարթակներ) օգտագործման հարցում: Այդուհանդերձ, դատելով հարցվածների պատասխաններից, մասնակցային ակտիվության հարցում ավելի շատ խոսվում է ավանդական, ոչ ֆորմալ եղանակների մասին, ինչպիսիք են, օրինակ, գյուղամիջյան քննարկումները: Այդուհանդերձ, մասնակցային այս ձևաչափերն ավելի շատ աչքի են ընկնում ազդակային, քան պարբերական բնույթով: Ընդ որում, մասնակցային ավանդական մեխանիզմների դեպքում հարցվածներն իրենց վերապահում են ոչ այնքան նախաձեռնողի,

---

[6] Տե՛ս **Leydet D.**, Citizenship, Stanford Encyclopedia of Philosophy, 2006, https://plato.stanford.edu/entries/citizenship/

[7] Տե՛ս **Hart D., Richardson C.** and **Wilkenfeld B.,** նշվ. աշխ., էջ 771:

որքան վերևից իջեցված որոշումներին ենթարկվողի կամ պասիվ մասնակցի դեր: Այս եզրահանգումների մասին են վկայում քաղաքացիական մասնակցությանը վերաբերող հետևյալ պատասխանները.

«Դե, արդեն ջահելները պիտի մասնակցեն, ես ինչ մասնակցեմ: Կուրախանամ, հա, որ զարգանա, ջահելությունն էլ տեղ ունենան, աշխատանքի տեղ ունենան, աշխատեն, քինան ոչ Ռուսաստան: Շատ կուզեմ, բայց ո՞ւր ա, կա՞»:

«… Անցած, թե նախանցած տարի գյուղում ինչ-որ ոսկու հանք պիտի բացվեր, ես դուրս եմ էկել մարդկանց հետ, ժողովրդի մոտ կանգնել եմ, լսել եմ: Չէ՛, ոչ մի կարծիք չեմ հայտնել, ջահելներն են խոսել: Ինձ հետաքրքիր էր»:

«Ես չեմ մասնակցում, եթե լիներ, մեծ սիրով կուզենայի պահանջներ ներկայացնել մեր գյուղի համար, բայց, դե, նման բաներ չի էղել, ես չեմ մասնակցել»:

Քաղաքացիական ինքնության տեսական մոտեցումներում մեծ տեղ է հատկացվում վստահության հիմնախնդրին: Այս համատեքստում վստահությունը դրական նախատրամադրվածությունն է այլոց հանդեպ, հավատը մյուսների ազնվության, վստահելիության և փոխադարձ համարժեք վերաբերմունքի նկատմամբ: Հետևաբար՝ վստահությանը անկյունաքարային նշանակություն է վերապահվում քաղաքացիության սոցիալ-հոգեբանական հիմքերի ձևավորման հարցում: Այս ոլորտում իրականացված հետազոտությունները վկայում են այն մասին, որ վստահությունը խթանիչ ազդեցություն ունի մասնակցային գործընթացներում[8]:

ՀՀ սահմանամերձ գյուղերի բնակիչների շրջանում իրականացված հարցմամբ հետազոտել ենք նաև վերջիններիս վստահությունը քաղաքական և քաղաքացիական հիմնական ինստիտուտների նկատմամբ: Մասնավորապես, հարցվածների պատասխաններից դատելով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ կառավարման համակարգի մաս կազմող ինստիտուտների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների նկատմամբ վստահությունը ևս կապ ունի տեղեկացվածության հիմնախնդրի հետ: Հարցվածների մեծ մասը ոչ միանշանակ վերաբերմունք է արտահայտում այդ ինստիտուտների նկատմամբ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների շրջանում վստահությունը անձնավորված կամ անձնականացված է: Այլ կերպ ասած՝ վստահության հարցում հարցվածները ավելի հեշտ են կողմնորոշվում, երբ դրա հիմքում ընկած է ինքնանույնականացումն առանձին անձանց (այս դեպքում՝ քաղաքական առաջնորդների) հետ: Մյուս կողմից՝ վստահության հիմնախնդրի շրջանակներում նկատվող անձնավորված ընկալումների մասին է վկայում նաև այն, որ հարցվածները տվյալ ինստիտուտի նկատմամբ վերաբերմուն-

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 778:

քը պայմանավորում են իրենց անձնական փորձով: Այս մոտեցումն ավելի վառ է արտացոլվում դատական համակարգի նկատմամբ վստահության պարագայում: Մասնավորապես, հարցվածներից շատերն իրենց ոչ միանշանակ վերաբերմունքը հիմնավորում են նրանով, որ անձնապես գործ չեն ունեցել դատարանների հետ: Այս դեպքում ուշագրավ են այսպիսի պատասխանները.

«Հլա գործերներս ընդեղ չի ընկել, որ տեսնենք, վստահում ենք, թե չէ»:

«Ես ի սկզբանե ասացի, որ դատարանների հետ առնչություն չեմ ունեցել: Չգիտեմ էլ նրանց գործունեության ոլորտը ինչ ա, ինչի համար ա»:

Ինչ վերաբերում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների և փորձառությունների նկատմամբ վստահությանը, ապա այս դեպքում ևս զգալի է տեղեկացվածության հիմնախնդիրը: Այլ կերպ ասած՝ այս պարագայում առանցքային է քաղաքացիական ինքնության բաղկացուցիչ տարրերից մեկի՝ քաղաքացիական գիտելիքի[9] (civic knowledge) սղության խնդիրը: Մասնավորապես, հարցվածների գերակշիռ մասը դժվարացել է որևէ կարծիք հայտնել արհմիությունների գործունեության վերաբերյալ, ոմանք էլ դրանց վերաբերյալ հայտնել են հետահայաց տեսակետներ՝ նույնականացնելով դրանք խորհրդային անցյալում գործող համանուն կառույցների հետ: Տեղեկացվածության նույն խնդիրը կարող ենք արձանագրել՝ ելնելով հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտահայտված վերաբերմունքից: Փոքր-ինչ այլ են կարծիքները քաղաքացիական շարժումների վերաբերյալ: Այս մասին հնչած տեսակետների բովանդակությունից երևում է, որ հարցվածների շրջանում քաղաքացիական շարժումների վստահելիության ընկալումները կապվում են «թավշա հեղափոխության» համատեքստում դրսևորված քաղաքացիական ակտիվության հետ: Այլ կերպ ասած՝ այս դեպքում քաղաքացիական շարժումների նկատմամբ ընկալումները ձևակերպվում են մեկ իրադարձության համատեքստում, ինչը ևս պայմանավորված է տեղեկացվածության և քաղաքացիական գիտելիքների սղության վերոհիշյալ հանգամանքներով:

Մյուս կողմից՝ իրականացված սոցիոլոգիական հետազոտությունը փաստում է, որ արդի հայաստանյան գյուղական համայնքներում տեղի են ունենում սոցիալական կառուցվածքային փոփոխություններ: Այդ փոփոխություններին զուգահեռ՝ փոխվում են նաև հայ գյուղացիների արժեքային դիրքորոշումները և ընկալումները: Այդ թվում փոխվել է նաև ժամանակակից հայ գյուղացու կերպարի ընկալումը: Եթե նախկինում այդ ինքնաընկալումներում գյուղացին հանդես էր գալիս

[9] Քաղաքացիական գիտելիքը շատ դեպքերում նույնացվում է ժողովրդավարական սկզբունքների վերաբերյալ գիտելիքի հետ: Այն կարևորում է նաև սեփական պետության՝ տեղային և միջազգային պատմության շուրջ գիտելիքի առկայությունը: Մյուս կողմից՝ քաղաքացիական գիտելիքը պայմանավորված է քաղաքական մասնակցությամբ և իրավունքների նկատմամբ հարգանքով: Տե՛ս **Hart D., Richardson C**. and **Wilkenfeld B**., նշվ. աշխ., էջ 778:

որպես ավանդապաշտ, կոլեկտիվիստական կողմնորոշում ունեցող, աշխատասեր, օգնության ձեռք մեկնող և այլն, ապա այժմ նման բնութագրիչների միանշանակությունը կասկածի տակ է դրվում:

Նախապատվությունը ավելի շատ տրվում է սեփական ուժերին ապավինելուն և ինքնօգնությանը, իսկ ընտանեկան միջավայրի (սոցիալական մերձավոր միջավայրի) կարծիքը այլևս քիչ է կարևորվում, կտրուկ քչացել է համայնքի ընդհանուր խնդիրների լուծման գործընթացներում մասնակցությունը: Գյուղացու ինքնության նման փոխակերպումները հանգեցնում են միջանձնային հարաբերություններում փոխադարձ վստահության պակասին, ինչի արդյունքում թուլացել և խաթարվել են համայնքային սոցիալական նախկինում բավականաչափ ամուր կապերն ու վերահսկողությունը:

Այստեղ հատկանշական է մասնակցության ցուցանիշը մարզային միջոցառումներին: Տարբեր հարցվողներ մարզային միջոցառումներին մասնակցելու մասին հարցին տվել են նման պատասխաններ.

«Չէ՛, մարզի հետ ես ի՞նչ կապ ունեմ»:

«Չէ՛, չգիտեմ, ես որ չեմ մասնակցել: Դե, ես աշխատում եմ: Կարող ա անում են, ի՞նչ իմանամ: Չէ՛, չէ՛, չգիտեմ»:

Ավանդական սոցիալական կապերի արդի փոխակերպումները կարելի է դիտարկել որպես տեղական համայնքների ներկայացուցիչների միջև վերոնշյալ կապերի խաթարում, այն է՝ նոր պայմաններում համայնքի ներկայացուցիչների միջև գործառական կապերի ձևափոխում այլ կապերի կամ էլ ավանդական սոցիալական կապերի և հարաբերությունների խզում և համայնքից դուրս նոր կապերի ստեղծում: Այս սոցիալական գործընթացներն իրենց բնույթով ոչ միայն փոխակերպում են հայաստանյան գյուղական համայնքներում առկա սոցիալական կապերն ու հարաբերությունները, այլև վկայում են հայաստանյան հասարակության ներսում առկա այնպիսի հիմնախնդիրների մասին, ինչպիսիք են սոցիալական կապերի և հարաբերությունների թուլացումն ու այլակերպումը: Միաժամանակ, սոցիալական ինստիտուտների նկատմամբ անբավարար վստահությունը և վերջինիս հետ փոխկապված տեղեկատվական խնդիրների (*տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու գրագիտություն, տեղեկատվական հոսքերի նկատմամբ քննական մոտեցում*) հրատապությունը զգալիորեն սահմանափակում են ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքների բնակիչների կողմից քաղաքացիական մասնակցության և հաղորդակցային մեխանիզմների իրացման հնարավորությունները: Ըստ այդմ՝ ՀՀ սահմանամերձ գյուղական համայքների բնակիչների շրջանում քաղաքացիական ինքնության ձևավորումը և դրանով պայմանավորված՝ սուբյեկտային վարքաձևերի, վստահության մշակույթի, մասնակցային ակտիվության, քաղաքացիական գիտելիքի առաջխաղացումը հնարավորություն

կտան բարձրացնելու ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքների դիմադրողականությունը արդի մարտահրավերների պայմաններում:

Բանալի բառեր – *տեղեկատվական մարտահրավերներ, սահմանամերձ գյուղական համայնքներ, քաղաքացիական ինքնություն, քաղաքացիական մասնակցություն, քաղաքացիական գիտելիք*

АЙК НАЗАРЯН, АРЕМ МКРТЧЯН, ГАГИК ТУМАНЯН – ***Вызовы информационной сферы в процессе формирования армянской гражданской идентичности.*** – Сегодня общественное влияние информационных коммуникаций создает риски, что информация будет использована для манипуляции и искажения фактов, как инструмент агрессии. Поэтому урегулирование информационных вызовов в первую очередь имеет функцию безопасности. Формирование современной гражданской идентичности с ее ключевыми элементами может обеспечить соответствующие механизмы коррекции информационной политики в сторону упомянутых проблем. В частности, гражданская идентичность предполагает гражданское участие, гражданское знание (в частности, демократических институтов и принципов), социальное доверие. Эффективное формирование гражданской идентичности, оперируя механизмами гражданского обучения, способствует осознанному и грамотному отношению к информационным ресурсам. В статье на примере пограничных армянских сел анализируются особенности формирования гражданской идентичности в контексте актуальных информационных вызовов.

Ключевые слова: *информационные вызовы, пограничные сельские общины, гражданская идентичность, гражданское участие,, гражданское знание*

HAYK NAZARYAN, AREM MKRTCHYAN, GAGIK TUMANYAN – ***Information sphere challenges in the processes of formulation of Armenian civil identity***. – Nowadays, the significant impact of informational communications, aside from possibilities, also creates certain risks in social life. In this context, information is often used as a mean of manipulation and distortion of facts, as well as an instrument of aggression. Therefore, regulation of informational challenges, first of all, plays an important role on the side of security (especially for the vulnerable segments of population). In modern societies civic identity formation with its basic elements can provide relevant mechanisms of regulation, correction and complementation of informational policies towards mentioned problems. In particular, civic identity in its scientific interpretations presupposes such manifestations as civic participation (directed to the needs of the community), civic knowledge (in particular, competence regarding with democratic institutions and principles), social trust (which serves as a base for personal self-identification with other citizens and political institutions). The effective formation of the mentioned elements of civic identity, functioning with the mechanisms of civic education and in the context of the growing role of information, contributes a more conscious and competent attitude towards information resources. On the other hand, citizens' awareness broadens the field of social visibility, hence the opportunities and practices that can contribute to more effective self-organization of local communities. Thus, in this article, the peculiarities of civil identity formation, in the case of border Armenian rural communities, were analyzed in the context of actual informational challenges.

Key words: *informational challenges, border rural communities, civil identity, civic participation, civic knowledge*

ABSTRACT

Nowadays, the significant impact of informational communications creates certain risks to social life. In this context, information is often used as a mean of manipulation and distortion of facts, as well as an instrument of aggression. Therefore, regulation of informational challenges, first of all, plays an important role on the side of security (especially for the vulnerable segments of population). In modern societies, civic identity formation with its basic elements can provide relevant mechanisms of regulation, correction, and complementation of informational policies towards mentioned problems. In particular, civic identity in its scientific interpretations presupposes such manifestations as civic participation (directed to the needs of the community), civic knowledge (in particular, competence regarding democratic institutions and principles), social trust (which serves as a base for personal self-identification with other citizens and political institutions). The effective formation of the mentioned elements of civic identity, functioning with the mechanisms of civic education and in the context of the growing role of information, contributes a more conscious and competent attitude towards information resources. On the other hand, citizens' awareness broadens the field of social visibility, hence the opportunities and practices that can contribute to more effective self-organization of local communities. Thus, in this article, the peculiarities of civil identity formation, in the case of border Armenian rural communities, were analyzed in the context of actual informational challenges.

Keywords: informational challenges, border rural communities, civil identity, civic participation, civic knowledge

About Authors

Hayk Nazaryan – PhD, Associate Professor of the Chair of International Relations and Diplomacy, Yerevan State University
E mail: hayk.nazaryan@ysu.am
Arem Mkrtchyan – PhD, Associate Professor of the Chair of Applied Sociology, Yerevan State University
E mail: arem.mkrtchyan@ysu.am
Gagik Tumanyan – Lecturer at the Department of Theory and History of Sociology, assistant, Yerevan State University
E mail: gagik.tumanyan@ysu.am

REFERENCES

Hart D., Richardson C. and Wilkenfeld B., Civic Identity, Camden, NJ, USA, 2011. Doi: https://doi.org/10.1007/978-1-4419-7988-9_32
Miraqyan, V. (2010). Lratvamijocneri azdecutyan hnaravorutyunnery. Yerevan, 41
Riepl, W. (1972). Das Nachrichtenwesen des Altertums mit besonderer Rücksicht auf die Römer. Hildesheim: Georg Olms, 478
Drobijeva, L.M. (2006). Gosudarstvennaya i etnicheskaya identichnost': vybor i podvijnost'. Grajdanskaya, etnicheskaya i religioznaya identichnost' v sovremennoi Rossii. Moscow, 10-30